## ԵԱՀԿ մոդել Սյունիքում

ԵԱՀԿ մոդել համաժողովը տեղի կունենա Կապանում՝ 2010թ. մայիսի 7-8 -ին:

- 40 հաջողակ դիմորդներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնելու է մեկ ԵԱՀԿ մասնակից պետություն, կընտրվեն ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից՝ համաժողովին մասնակցելու համար:
- Ընտրված դիմորդները կմասնակցեն.
  - բազմակողմանի ռազմավարական բանակցություններ վարելու և միջազգային հարաբերությունների ընդհանուր տեսություն թեմայով դասընթացներին
  - հրապարակային խոսքի/ելույթներ ունենալու դասընթացին
  - ԵԱՀԿ-ի գործունեության մասին համապարփակ ներածական տեղեկատվական դասընթացին
- Համաժողովի ընթացքում կատարած աշխատանքի համար բոլոր մասնակիցները՝ որպես պարգևատրում, կստանան ԵԱՀԿ մոդելի մասնակցության պաշտոնական հավատարմագիր:
- Երեկոյան մասնակիցներին սպասվում է հետաքրքիր ժամանց, որը կառաջարկվի ԵԱՀԿ մոդելի կազմակերպիչների կողմից:

## Ինչպե՞ս կարող եք մասնակցել

- Դուք Սյունիքի մարզից եք
- Դուք 18-25 տարեկան երիտասարդ եք

Եթե Ձեր տվյալները համապատասխանում են, ապա՝

- Ձեռք բերեք դիմումաձևերը Սյունիքի մարզի ԵԱՀԿ ծրագրերի իրականացման գրասենյակից կամ երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնից, ինչպես նաև ԵԱՀԿ կայքէջից www.osce.org/yerevan

Ներկայացրեք Ձեր դիմումները ԵԱՀԿ ծրագրերի իրականացման գրասենյակ կամ ուղարկեք էլեկտրոնային տարբերակով Karen.Arzumanyan@osce.org մինչև 2010թ. փետրվարի 28-ը:

- Առաջին փուլն անցած թեկնածուները հեռախոսով հարցազրույց կանցնեն՝ միջոցառմանը մասնակցելու համար:

model osce

Մայիսի 7-8, 2010թ.

Կապան, Սյունիք

## Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) մասին

- ԵԱՀԿ-ն ամենաընդգրկուն տարածաշրջանային անվտանգության կազմակերպությունն է աշխարհում, որի 56 մասնակից պետությունների աշխարհագրական տարածքը ձգվում է Վանկուվերից մինչև Վլադիվոստոկ;
- Այն ունի 18 առաքելություններ հարավարևելյան Եվրոպայում, արևելյան Եվրոպայում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում:
- Կազմակերպության գործունեությունը ներառում է իր տարածաշրջանում վաղ ազդարարումը, հակամարտությունների կանխարգելումը, ճգնաժամերի կառավարումը և հետկոնֆլիկտային վերականգնումը:
- Կազմակերպության ռազմաքաղաքական, տնտեսական ու բնապահպանական և մարդու իրավունքների անվտանգության երեք ոլորտները զբաղվում են համապարփակ անվտանգության մի շարք խնդիրներով: Դրանք ներառում են սպառազինությունների վերահսկողություն, մարդկանց և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն, ժողովրդավարացում, ոստիկանության արդյունավետ ռազմավարություն, ահաբեկչության դեմ պայքար և տնտեսական և բնապահպանական գործունեություն:
- Բոլոր 56 մասնակից պետություններն ունեն հավասար կարգավիճակ և որոշումներն ընդունվում են կոնսենսուսի միջոցով քաղաքական, բայց ոչ իրավական պարտադրվածության հիմքերով:

## ԵԱՀԿ մոդել Հայաստանում

- ԵԱՀԿ մոդելը ձգտում է ներգրավել նոր սերնդին, որը ԵԱՀԿ տարածաշրջանի ապագան է:
- Ձեր մասնակցությունը, Ձեր հետաքրքրությունը և Ձեր պատրաստակամությունը մասնակցել անվտանգության մարտահրավերներին, որոնց մենք այսօր դեմ ենք առնում, թարմ ուժ կտա տարածաշրջանում անվտանգ ապագա կառուցելու մեր ջանքերին:
- Հայաստանում երիտասարդները ոչ բավարար չափով են ներկայացված որոշումների և քաղաքականության մշակման մակարդակներում: Որպես մեր երկրի ապագա առաջնորդներ՝ նրանց պետք է հնարավորություն տալ մասնակցել այսօրվա քաղաքացիական կյանքին:
- Հայաստանում ժողովրդավարության հաստատման համար անհրաժեշտ է ստեղծել մի միջավայր, որտեղ առաջնորդների և ակտիվիստների նոր սերունդը կարող է մասնակցել ազատ քննարկումներին:
- Մամուլի և հանրային տեղեկատվության բաժնի հետ համատեղ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի երիտասարդական ծրագիրը աջակցում է երիտասարդների մասնակցությանը ժողովրդավարական գործընթացներին: ԵԱՀԿ մոդելի համաժողովները հարստացնում են երիտասարդության գիտելիքները ժողովրդավարական որոշումների ընդունման և ԵԱՀԿ-ի՝ որպես անվտանգության բազմակողմանի գործչի մասին:

## Մեր կոնտակտները

### Սյունիքում


ԵԱՀԿ ծրագրերի իրականացման գրասենյակ
Կապան, Ա. Մանուկյան 1, բն. 60
Հեռ. 0285 20040

Կարեն Արզումանյան
(091) 29 03 02
Karen.Arzumanyan@osce.org

Սյունիքի մարզի երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն
Կապան, Մշակույթի պալատ, 1-ին հարկ (Չարենցի փ.)

Շուշանիկ Առաքելյան
(077) 15 78 77


### Երևանում


ԵԱՀԿ երևանյան գրասենյակ
Սունդուկյան 64/1
Հեռ. 010 229610/11/12/13/14, ներք. 5462

Մելինե Նահապետյան
Երիտասարդության հարցերով ժողովրդավարացման ծրագրի օգնական
Meline.Nahapetyan@osce.org

www.osce.org/yerevan


ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
**երևանյան գրասենյակ**